ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԴԱՍԵՐԻ ՏԵՍԱՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԴԱՍԱԽՈՍԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2021

Հարգելի՛ դասախոս, այս ուղեցույցում մանրամասն նկարագրված է Ձեր կողմից դասավանդվող առարկաների տեսաձայնագրությունների տրամադրումը Ձեր տվյալ կուրսի ուսանողներին ըստ քայլերի հաջորդականության: Եվ այսպես.

1. Նախ մուտք եք գործում Ձեր **Google Drive** (**Гугл Диск**) Ձեր էլ. փոստից



2. պարունակությունից ընտրում եք **Meet Recordings** թղթապանակը,



որի մեջ գտնվում են ձեր կողմից արված տեսաձայնագրությունները:

3. Ընտրում եք այն տեսաձայնագրությունը, որի հասանելիությամբ պետք է կիսվեք Ձեր ուսանողների հետ (օրինակ՝ ներքևի նկարում նշված տեսաձայնագրությունը):



Մկնիկի սլաքը դնում եք այդ ֆայլի վրա և կատարում մկնիկի **աջ հարված** (**Right Click):** Բացվող մենյուից ընտրում եք **Открыть доступ (Share)** կետը:



4. Բացված այս պատուհանի **Добавьте пользователей или группы** դաշտում լրացնում եք բոլոր ուսանողների այն էլեկտրոնային հասցեները, որոնք տրամադրվել են ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի Ձեր բաժնի համակարգողի կողմից **կամ** ուսանողների հասցեները կարող եք տեսնել հեռավար հարթակի Ձեր դասընթացի «**Մասնակիցներ»** բաժնում







5. Լրացնելով բոլոր ուսանողների հասցեները, այդ դաշտի աջ հատվածից ընտրում եք **Читатель** կետը (ինչպես երևում է վերը պատկերված նկարից) և սեղմում **Отправить,** որից հետո վերջնական հաստատումը կատարվում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի աշխատակցի կողմից: